

«ԵՍ ԴՆԵՄ ԶԶԵՌՍ Ի ՎԵՐԱՅ ՍՈՅԱ, ԵՒ ԴՈՒՔ ԱՄԵՆՆԵՔԵԱՆ ԱՂՕԹՍ ԱՐԱՐԷՔ»

Սույն թվականի սեպտեմբերի 1-ին՝ Տիրամոր գոպու գյուղի փոնին, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, օրհնությամբ Արմավիրի թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, հընթացս Սուրբ Պապարագի, քահանայական ծառայության կոչվեցին Մայր Աթոռիս ութ միաբան սարկավազներ, որոնցից վեցը՝ ամուսնացյալ, երկուսը՝ կուսակրոն քահանաներ:

Ըստ Հայոց Մայր Եկեղեցու ավանդական հաստատված կանոնի, ձեռնադրության կարգն սկսվեց նախորդ օրվա երեկոյան ժամերգության ավարտին, քանի որ եկեղեցական օրն սկսվում է նախորդ օրվա երեկոյան ժամերգությունից հետո: Մայր Աթոռի միաբանների հետ ընծայացումները Տաճարի դռան առջևից, «Նայեա ի մեզ» շարականի երգեցողության ներքո, ծնկաչոք մոտեցան Իջման Ս. Մեղանի առջև գահին բազմած եպիսկոպոսին, ով խորհրդանշում էր մեր Տիրոջ ներկայությունը: Խարավալիակությունը, ում պաշտոնը վկայություն փալն էր, սրանձնել էր Հոգեշնորհ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը, որը հավաքացյալների անունից ձեռնադրող եպիսկոպոսին ասաց. «Խնդրե՛ ի քէն Մայրս մեր Սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես սարկաւագունս զոր ընծայեն քեզ յաստիճան քահանայութեան» (Մաշտոց Ձեռնադրութեան, Վաղարշապատ. 1876 թ., էջ 26):

Ձեռնադրող Սրբազան Հայրն օրհնեց նրանց՝ Ամենակալ Աստծո շնորհը փոխանցելով, որպեսզի կարողությունն ունենան «բառնալ սիրով զլուծն Քրիստոսի եւ երթալ կամաւ զհետ Կենարարին»: Ձեռնադրվողները հնազանդության ուխտ կնքեցին ապրել առաքելական և հայրապետական կանոնների համաձայն:

Հաջորդ օրը, հընթացս Ս. Պապարագի, 8 ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ավագ Ս. Խորան: Դառնալով դեպի հավաքացյալ ժողովուրդը՝ ընծայացումները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացումների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Բաբկեն սրկ. Բոգիկյանը վերակոչվեց Տ. Տրդատ քահանա, Արմեն սրկ. Եզեկյանը՝ Տ. Պետրոս քահանա, Հովհաննես սրկ. Խաչատրյանը՝ Տ. Նահապետ քահանա, Արամայիս սրկ. Մուրադյանը՝ Տ. Պսակ աբեղա, Լևոն սրկ. Պանֆյորովը՝ Տ. Նշան քահանա, Գևորգ սրկ. Մարգարյանը՝ Տ. Գաբրիել աբեղա, Գևորգ սրկ. Մակարյանը՝ Տ. Աղամ քահանա, և Արթուր սրկ. Կարապետյանը՝ Տ. Ասողիկ քահանա: Սիոն Սրբազանը նորաօծ քահանաներին փոխանցեց նաև Հաղորդության սկիզբը՝ նրանց փալով պատարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Այնուհետև Սիոն եպս. Ադամյանը Սրբալույս Մյուռոնով կապարեց օծումը քահանայության կոչված սարկավազների, և նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխեցին հավաքված ժողովրդին: Հընթացս Ս. Պապարագի, ձեռնադրության ժամանակ, Սիոն Սրբազանը, իր քարոզում շնորհավորեց նորաօծ քահանաներին և անդրադարձավ քահանայության կոչմանն ու հոգևոր խորհրդին: